Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԶԼՄ-ների ազատության հարցերի Ներկայացուցիչ

ԶԼՄ-ների հարցերին նվիրված՝ հարավկովկասյան 8-րդ համաժողով
Բազմակարծությունը և համացանցի կառավարումը

Թբիլիսի, Վրաստան
20-21 հոկտեմբերի, 2011 թ.

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԶԼՄ-ների հարցերին նվիրված՝ հարավկովկասյան 8-րդ համաժողովը կազմակերպվել էր Թբիլիսիում, 2011 թ. հոկտեմբերի 20-ից 21-ը, ԶԼՄ-ների ազատության հարցերի ԵԱՀԿ Ներկայացուցչի գրասենյակի կողմից՝ ԵԱՀԿ Բաքվի և Երևանի գրասենյակների աջակցությամբ: Տարիների ընթացքում համաժողովը դարձել է մի յուրօրինակ ֆորում, որտեղ քննարկվում են լրատվամիջոցների հիմնահարցերը և Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի լրագրողների միջև համագործակցությունը:

Երկօրյա համաժողովին մասնակցում էին ավելի քան 70 պետական պաշտոնյաներ, պատգամավորներ, լրագրողներ, փորձագետներ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ Հայաստանից, Ադրբեջանից և Վրաստանից:

Համաժողովի ուշադրության կենտրոնում էր համացանցի կարգավորումը և լրատվամիջոցների բազմակարծությունը: Մասնակիցները քննարկեցին ԵԱՀԿ տարածաշրջանում և, մասնավորապես, Հարավային Կովկասում բազմակարծությունը խթանելու գործում համացանցի դերը, վերլուծեցին այս ոլորտի միջազգային չափանիշները և փորձը, գնահատեցին համացանցով բազմակարծությունը խթանելու գործում ինքնակարգավորվող անկախ մարմինների տրամադրված հնարավորությունները, փոխանակեցին փորձը, ինչպես նաև ներկայացրեցին Հարավային Կովկասում լրատվամիջոցների ազատության ոլորտում վերջին զարգացումները:

Համաժողովը՝

1. ողջունում է այն փաստը, որ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության և կառավարության ներկայացուցիչները մասնակցել են համաժողովին՝ գիտակցելով լրատվամիջոցների ոլորտում տարածաշրջանային համագործակցության կարևորությունը,

2. ընդունում է, որ համացանցում քաղաքացիական լրագրությունը և բլոգային գործունեությունը քաղաքացիական գործունեություն է,

3. կոչ է անում կառավարություններին ստեղծել անհրաժեշտ բոլոր օրենսդրական և տեխնոլոգիական միջոցները՝ տեղեկությունների ավելի ազատ և լայն տարածմանը նպաստելու համար, այդ թվում՝ տեղեկատվական և հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով,

4. հորդորում է կառավարություններին ապահովել, որպեսզի համացանցը մնա բաց և հրապարակային ֆորում Հարավային Կովկասի երկրներում խոսքի և կարծիքի ազատության համար, ինչպես երաշխավորված է ԵԱՀԿ-ի հանդեպ ստանձնած պարտավորություններում և ամրագրված՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում ու Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում,

5. ընդգծում է, որ համացանցի մատչելիությունը և առցանց տեղեկատվության մատչելիությունը պետք է ճանաչվի ազգային օրենսդրությամբ և հարգվի որպես տեղեկատվության ու խոսքի ազատության անբաժանելի մաս,

6. շեշտում է, որ համացանցն առաջարկում է եզակի հնարավորություններ՝ տեղեկատվության ազատ հոսքը խթանելու գործում, որը ԵԱՀԿ- հանդեպ ստանձնած հիմնական պարտավորություններից է,

7. շեշտում է, որ խոսքի ազատության իրավունքը տարածվում է հաղորդակցության ոչ միայն ավանդական միջոցների, այլ նաև նոր լրատվամիջոցների, այդ թվում՝ համացանցի վրա: Իրավունքի ցանկացած սահմանափակում կարող է արդարացվել միայն այն դեպքում, եթե կա ժողովրդավարական հասարակության համար անհրաժեշտ հանրային հետաքրքրություն, որը սահմանված է օրենքով և, եթե համաչափ է,

8. հորդորում է կառավարություններին խուսափել որպես միջամտության տեսակ համացանցային ռեսուրսները արգելափակելուց: Արգելափակումը կարող է արդարացվել միայն միջազգային նորմերին ու չափանիշներին համապատասխան, ինչպես նաև միայն այն դեպքում, եթե անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությանը և, եթե դրանք նախատեսված են օրենքով և հետապնդում են օրինական նպատակ,

9. կոչ է անում կառավարություններին խոսքի կարգավորման ժամանակ խուսափել անորոշ իրավական դրույթներից և ապահովել, որպեսզի օրենքների ու գործելաոճերի իրականացումը լինի թափանցիկ և բաց՝ բողոքարկման համար,

10. հորդորում է բոլոր երեք կառավարություններին խթանել բազմակարծությունը և զերծ մնալ լրատվամիջոցների դեմ ոտնձգություններից և մենաշնորհումից.

11. շեշտում է, որ լրատվամիջոցների բազմակարծությունը էական արժեք է և ժողովրդավարական հասարակության գոյության կարևորագույն պայմաններից մեկը, որտեղ համացանցը առանցքային դեր է խաղում.

12. կոչ է անում կառավարություններին նպաստել մատչելի և բարձրորակ ինտերնետային կապի զարգացմանը ու բարենպաստ պայմաններ ստեղծել ինտերնետ ծառայություններ մատուցողների (ISP) միջև առողջ մրցակցության համար, որպեսզի բոլոր քաղաքացիների, այդ թվում՝ գյուղերում և հեռավոր շրջաններում բնակվողների համար ապահովվի ինտերնետ հասանելիությունը.

13. շեշտում է, որ ISP-ները չպետք է ենթարկվեն պետական կառավարման ընթացակարգերին, բացառությամբ այն ընթացակարգերի, որոնք կիրառելի են այլ բիզնեսների համար: Ավելին, ISP-ները չպետք է պատասխանատվություն կրեն իրենց ծառայության միջոցով տարածվող նյութերի բովանդակության համար, ինչը ձևավորվել է ուրիշների կողմից, քանի դեռ նրանք չեն միջամտել այդ բովանդակությանը կամ հրաժարվել ենթարկվել անօրինական նյութը հեռացնելու դատարանի հրահանգին.

14. ընդգծում է, որ ցանցի չեզոքությունը պետք է հարգվի, այնպես որ առցանց տեղեկատվությունն ու թրաֆիկը հավասար վերաբերմունքի արժանանան՝ անկախ տեղեկության կրիչից, բովանդակությունից, հեղինակից, ծագումից կամ նշանակությունից.

15. կառավարությունները պետք է ապահովեն, որպեսզի ինտերնետ ծառայություն մատուցողները հարգեն ցանցի չեզոքության սկզբունքը և տվյալների թրաֆիկի կառավարման իրենց քաղաքականությունը թափանցիկ դարձնեն.

16. կառավարությունները պետք է խորհրդակցեն և ներգրավեն քաղաքացիական հասարակությանը համացանցի կառավարման քաղաքականության մշակման գործում:

* * *